

## Հաշվետվություն

2023 թվականի մայիսի 1-ից 5-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք)  
կատարած գործուղման արդյունքների մասին

### 1. Անունը, ազգանունը.

Արամ Գուգարաց՝ Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ,  
Կիմա Վաղարշակյան՝ Կոմիտեի արտաքին կապերի վարչության գլխավոր  
մասնագետ:

### 2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք, մայիսի 1-ից 5

### 3. Հրավիրող կողմը.

Միավորված ազգերի կազմակերպություն

### 4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագիտական խմբի 3-րդ նստաշրջանին:

### 5. Քննարկված թեմաները.

Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.

- անդամ պետությունների աշխարհագրական անվանումների ազգային ստանդարտացման ուղղությամբ տարվող աշխատանքների նորմատիվ-իրավական, մեթոդական և կազմակերպչական ընթացիկ իրավիճակը,
- աշխարհագրական անվանումների ազգային բազայի ստեղծման հեռանկարային ուղղությունները,
- աշխարհագրական անվանումների՝ որպես մշակութային և պատմական ժառանգության պահպանման հետ կապված հարցերը,
- ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագիտական խմբի անդամների թեմատիկ ազգային զեկույցները:

### 6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Վերոնշյալ միջոցառմանը կադաստրի կոմիտեի պատվիրակության ղեկավար Արամ Գուգարացը հանդես է եկել ազգային զեկույցով՝ ներկայացնելով աշխարհագրական անվանումների ստանդարտացման ուղղությամբ վերջին տարիներին Հայաստանում տարվող աշխատանքերը, ինչպես նաև անդրադառնալով 2021 թվականի ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագիտական խմբի նիստի ընթացում Ադրբեջանի Հանրապետության կողմից ներկայացված զեկույցի՝ հայկական տեղանուններին վերաբերող հատվածին, որով

հայկական մի շարք տեղանուններ ներկայացվել էին իբրև կեղծված: Փորձագիտական խմբի 30-ից ավելի երկրների ներկայացուցիչներ ևս ներկայացրել են թեմատիկ ազգային զեկույցներ: Նստաշրջանին ելույթներով են հանդես եկել նաև այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպիսիք են GoogleMaps, Esri, The Gazetteers.net, Միջազգային քարտեզագրական ասոցիացիան և այլն: Ելույթներով են հաղես եկել նաև նստաշրջանի նախագահողն ու քարտուղարությունը՝ ամփոփելով նախորդ նստաշրջանից հետո կատարված աշխատանքերը, համագործակցության նոր ուղղությունները և հետագա անելիքները:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նստաշրջանի ավարտին մասնակիցները հաստատել են աշխատանքային խմբերի գործունեությունն ամփոփող բանաձևերը, ինչպես նաև հաստատվել է 2023 թվականի ՄԱԿ աշխարհագրական անվանումների փորձագիտական խմբի 3-րդ նստաշրջանի զեկույցը: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել 2025 թվականի ՄԱԿ աշխարհագրական անվանումների փորձագիտական խմբի հերթական նստաշրջանի օրակարգի նախագծի վերաբերյալ:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քանի որ նստաշրջանի և դրա շրջանակներում գործող աշխատանքային խմբերի գործունեության առանցքը աշխարհագրական անվանումների ստանդարտացման ողողությամբ համընդհանուր մոտեցումների ձևավորման խթանումն է և մարտահրավերների հաղթահարման գործընթացի դյուրինացումը, ուստի մշակվում և մասնակիցներին է ներկայացվում գործունեության առանձին ուղղությունների վերաբերյալ ուղեցույցներ:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը:**

Արամ Գուգարաց  
Կինա Վաղարշակյան



10.05.2023թ.